

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԾԱՂԿՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ՏԱՐԻՆ



Դավիթ մարգարեի խոսքը՝ «Երկ, մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ», (ՍԱՂՄՈՍ ՃԼԶ, 5—6), Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հարազատ զավակի ուղեցույցը պիտի հանդիսանա իր դիրքը հայրենի երկրի նկատմամբ կողմնորոշելիս. «Եթե մոռանամ քեզ, Հայրենիք, թող աջ ձեռս ինձ մոռանա: Թող իմ լեզուս քիմքիս կպչի, եթե ես քեզ չհիշեմ, եթե ես քեզ իմ բոլոր ուրախություններից վեր չդասեմ»:

Հայաստանյայց Ս. Եկեղեցու նման վերաբերմունքը դեպի Հայրենիքը՝ նոր և պապանական չէ. նա բխում է քրիստոնեության հիմնական սկզբունքից և հայ իրականության մեջ նա կոփվել, ամրացել և ստուգվել է տասնյակ դարերի առողջ կենսափորձով:

Հայաստանյայց Ս. Եկեղեցին, որպես ժողովրդական եկեղեցի, իր գոյության ողջ պատմության մեջ հակաժողովրդական, հակահայրենական ընթացք չի որդեգրել:

Բոլոր ժամանակներում, երբ Հայրենիքին սպառնացել է օտար նվաճողների վտանգը, հայ հոգևորականը կանգնել է հայրենասեր պայքարողների կողքին: Դրա լավագույն ապացույցն է տվել Ղևոնդ Երեցը Վարդանանց հերոսամարտում: Դրա լավագույն ապացույցը տվել են հազարավոր հայ եկեղեցական նահատակները: Դրա ապացույցը նոր ժամանակներում տվեց նաև Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը Հայրենական մեծ պատերազմում:

Հայ եկեղեցին անխարդախ է գտնվել հայ պետականության նկատմամբ: Իսկ անցյալում հայ պետականությունը կորցնելուց հետո, երբ հայ ժողովուրդը ընկավ օտար լծի տակ և սկսեց կեղեքվել, Հայ եկեղեցին վըշտակից եղավ նրան և հավասար բաժանեց նրա ցավն ու տառապանքը: Նա երբեք չլքեց իր ժողովրդին նրա սև օրում և արաց կարելին՝ իր թևերի տակ ծվարելով հավատացյալ հոտը:

Նման ավանդական սկզբունքներ ժառանգած Հայոց Ս. Եկեղեցին և նրա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հասկանալի է, չէին կարող բացառիկ ուրախությամբ չհամակվել, երբ երեսունմեկ տարի առաջ Հայաստանի վրա ծագեց սովետական ազատարար և կենսաբեր արևը, որը լույս, օդ և կյանք տվեց խորտակման վիճի առջև կանգնած բազմաշարշար հայ ժողովրդին: Հայ ժողովուրդը տեր դարձավ իր սեփական պետականության:

Հայ պետականությունը ստեղծող նոր սերունդը իրապես պողպատի կամք ունեցող հրաշագործ սերունդ հանդիսացավ: Նա ոչ

միայն վերաշինեց ավերված երկիրը, բուժեց նրա ծանր վերքերը, այլև հրաշքներ սկսեց գործել: Բառացի, ոչնչի վրա, իրար հետևից, սկսեցին բարձրանալ արդյունաբերական հսկաներ՝ կաուչուկի, մետաղամշակման, քիմիական, մեքենաշինական և տասնյակ այլ գործարաններ ու ֆաբրիկաներ: Բավական է թեկուզ ընթերցել մեր ամսագրի ներկա համարում տպագրվող գերաշնորհ Վազգեն եպիսկոպոսի նանապարհորդական տպավորությունները Հայաստանից, որպեսզի կարելի լինի պատկերացնել վիթխարի այն վերելքը, որ ունեցել է մեր Հայրենիքը 31 տարիների ընթացքում: Նախկին հետամնաց գյուղատնտեսական երկրից Հայաստանը վեր է ածվել զարգացած արդյունաբերական երկրի:

Արդյունաբերության վերելքին զուգակցվեց էլեկտրական կայանների կառուցումը: Զարգացած արդյունաբերությունը պահանջում է էլեկտրական ուժ՝ մեքենաները շարժելու համար: Լույսի կարիքն ունեն նաև մեր քաղաքները ու գյուղերը, որոնք վաղուց պատմական թանգարանին են հանձնել ձեթի նրագները, որոնց լույսի տակ խարխափել են նրանք դարեր շարունակ: Հիմնովին բարեփոխվել է մեր գյուղը: Նախկին արորին և փայտե գութանին փոխարինելու են եկել տրակտորները: Նախկին կամերին աստիճանաբար դուրս են մղում ասպարեզից հսկա կալսիչները, սայլերին՝ ավտոմեքենաները...: Եվ այս բոլորի նպատակն է բարձրացնել գյուղը քաղաքին հավասար աստիճանի և հեշտացնել գյուղացու աշխատանքը:

Աներևակայելի աստիճանի զարգացել է մեր ժողովրդի կուլտուրան: Մի դար առաջ ապրող ո՞ր հայրենասերը կարող էր անգամ երազել, որ երբևէ հնարավոր կլինի Հայրենիքի բոլոր գյուղերում ունենալ դպրոց, գրադարան, ակումբ և կուլտուրական այլ հաստատություններ: Ո՞վ կարող էր մտածել անգամ, որ քաղաքներում կարելի է ունենալ ուսման տասնյակ բարձրագույն հաստատություններ, Պետական համալսարան, Գիտությունների ակադեմիա, կոնսերվատորիա, թանգարաններ, գիտական և ուսումնական տասնյակ հաստատություններ և այլն: Եթե անցյալում բարձրագույն կրթություն էին ստանում առանձին անհատներ, հասարակության այսպես կոչված «ընտրանի»ն, ապա այժմ բարձրանում է ողջ հասարակությունը հիմքից: Եվ այս մեր Հայրենիքի 31 տարվա աշխատանքների մեծագույն հաջողություններից մեկն է: Ներկա հրաշագործ սերունդը ո՛չ միայն փոխում է երկիրը, նրա հետ փոխվում է և ինքը: Նախկին նեղ եսասիրական շահերի մեջ կաղապարված մարդուն փոխարինելու է եկել հասարակական լայն շահերով տոգորված, հայրենասեր գաղափարական մարդը:

Հայրենի կառավարության տաղանդավոր ղեկավարները, որոնք ընտրված են ժողովրդի իսկ կողմից, բնական է, չէին կարող անուշադրության թողնել Սփյուռքի թափառական հայությանը, որ ցանկանում էր ներգաղթել Հայրենիք՝ իր քրտինքը խառնելու հարազատ եղբայրների և քույրերի քրտինքին: Բարենպաստ քաղաքական պայմաններում բացվեցին Հայրենիքի դռները և հարյուր հազար հայեր եկան և բնակություն հաստատեցին հայրենի երկրում: Կասկած լինել չի կարող, որ բարենպաստ քաղաքական նոր իրադրության մեջ, անուշադրության չեն թողնվի Սփյուռքում, օտարության մեջ թախծող հայրենաբաղձ մեր մնացած հայերն ևս:

Հայ ժողովուրդը, իհարկե, լավ է հասկանում, որ հսկայական այս աշխատանքը արդյունք չէ միայն իր սեփական ջանքերի. նրան գործուն աջակցություն են ցույց տվել Սովետական Միության եղբայրական ժողովուրդները, առանձնապես ռուս ազնիվ ժողովուրդը, որին հայ ժողովուրդը մեծապես երախտապարտ է: Հանելի է ընդգծել, որ երախտագիտության այդ զգացմունքն ունեն ո՛չ միայն Մայր Հայրենիքում ապրող հայերը, որոնք ամեն օր շոշափելի օրինակներով տեսնում են և զգում այդ օգնությունը, այլև Սփյուռքի հայությունը: Այս տարի Մայր Աթոռի պատգամավորությունը Լիբանանում գտնված ժամանակ, երբ Բեյրութի եկեղեցական վարչություններից մեկը ի պատիվ պատվիրակության երեկույթ է կազմակերպել, զառամած մի ծերունի մոտեցել է պատ-

վիրակությանը և հայտարարել հետևյալը. «Ռուս ժողովուրդը հայ ժողովրդի արևն է, Աստված անմար պահի այդ արևը»: Ծերունու այդ արտահայտությունը հայ ժողովրդի ռուս ժողովրդի նկատմամբ տածած երախտագիտական խորը զգացմունքի անխարդախ ու խտացված արտահայտությունն է:

31 տարիների ընթացքում մեծ է մեր Հայրենիքի վերելքը: Սակայն մեր ժողովուրդը չի բավարարվում իր ձեռք բերածով, նա ցանկանում է ավելին: Այդ են ապացուցում նրա ապագայի հոյակապ ծրագրերը, որոնց վերջնական նպատակն է կատարյալ երջանկություն բերել ժողովրդին: Բայց մեր ժողովուրդը միաժամանակ գիտակցում է, որ իր այդ ծրագրերը ինքը կարող է իրականացնել միայն խաղաղության պայմաններում, խաղաղ ստեղծագործական աշխատանքով, ուսի և նա հաստատակամ կանգնած է աշխարհի խաղաղության համար պայքարողների կողքին: Մեր ժողովրդի այդ ձգտումը պարզորոշ արտահայտեցին Հայկական ՍՍՌ խաղաղության կոնֆերանսի պատգամավորները, որոնց ելույթները պարբերաբար տրվում են մեր մամուլում: Պետք է ասել, որ խաղաղությունը մեր ժողովրդի համար առանձնապես նվիրական գաղափար է, որովհետև նա շատ է ճաշակել պատերազմի դառն պտուղները: Հայաստանյայց Ս. Եկեղեցին, որ դարեր շարունակ աղոթել է Աստծուն՝ իր ժողովրդին խաղաղության մեջ պահելու համար և իր տաճարների սրբազան սեղաններից բարեմաղթել է «Խաղաղութիւն ամենեցուն», չի կարող այլ ուղղություն վերցնել: Այդ սկզբունքի հետևողական կիրարկողներից մեկն է ներկայիս Ամենայն Հայոց Հայրապետը, որի խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսում խոսած ճառը տրվում է «Էջմիածին» ամսագրի ներկա համարում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որը գտնվում է Մայր Հայրենիքում, Արարատյան աշխարհի գիրկը և ականատես է Հայրենիքի վիթխարի տեղաշարժերին, ի՞նչպես կարող է շուրախանալ՝ տեսնելով հայ ժողովրդի օրավուր աճող բարեկեցությունը, ի՞նչպես կարող է, սաղմոսերգուի բառերով ասված, «իր բոլոր ուրախություններից վեր» չդասել իր ժողովրդի ուրախությունը, նրա 31 տարիների վերելքը տեսնելով:

Ծաղկուն Հայրենիքի 31-րդ տարում ի խորոց սրտի բարեմաղթում ենք, որ ավելի ծաղկի և բարգավաճի մեր սիրելի, մեր նվիրական Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը: